

\* Պենիթիքանայ գաղութը որբերու կիրակիին համար հանգանակութիւն մ'ընելով հաւաքեր մէջ Պրիսթլէի մէջ 4100 ֆր. իսկ Անկերսի մէջ 2566 ֆր.:

\* Ամերիկեան հպատակամատոյցի Պոլսոյ Ընդհ. տնօրէն ձէքուիդ Պոլիս հասեր է: Ան մօտէն տեղեկութիւններ պիտի հաւաքէ հայ գաղթաւ. կաններու վիճակի մասին:

\* Բարիզի մէջ մեռող Պարոն Խաչիկ Հիւն. քեարպէյէնտեան՝ ի նպաստ Հայ որբերու կտաւ. կած է 25(), (XX) ֆրանքի գումար մը:

\* Իտալիա գտնուող Հայեր Պ. Մարգար (Սհաւ. նեանի միջոցով մաս մը հագուստեղէն դրկած են Աթէնքի գաղթականներուն:

\* Անդրկովկասեան Սոց. Ֆէտ. Խորհրդային Հանրապետութեանց առևտրական նոր ձեռքաւ. յացուցիչ Պ. Շահմալեան — Պ. Պոզոս Մա. կինցեանի յաջորդ — Պոլիս ժամանած է:

\* Անտիոքի փոքրաթիւ հայ գաղութը իր ճիւղով յաջողած է կազմել Թաք. Խորհուրդ մը որ կը պահէ ֆանայ մը. շուտով պիտի ունենան նաև նոր վարժարան մը: Այն գաղութը գրիթէ ամբողջութեամբ կիլիկիցի հայերէ կազմուած է:

\* Հալէպի մէջ մօտաւորապէս 40 (XX) տարաւ. գիր հայութիւն մը կայ, որոնց 15000ը տեղաւորուած են Պաղատտի կայարանին մօտ բնդար. ձակ դաշտի մը վրայ: Այս գաղթականներուն մեծագոյն մասը կիլիկիոյ չընթանակին կը պատկանին, գրեթէ առանց բացառութեան ամենքն ալ գործով մը կը զբաղին և քիչ շատ ապահոված են իրենց ապրուստը, այնպէս որ քաղաքին մէջ ո և է հայ մուրաքիկի հանգիպիլ անկարելի է (Արև):

Հ. Բ. Ը. Միութեան հիւ Եորքի Տիկնանց և Որբախնամ Յանձնախումբը հիշք տարուան մէջ գոյացուցած է 90 (XX) տոլարի աւելի գումար մը: Դեկտ.ի մէջ անոր կազմած պազարէն գոյացել է 5000 տոլարէ հասոյթ մը:

\* Տօքթ. Մանուէլեան համաշխարհային համալսարանի մը կը ստանայ՝ Հայութեան պատուաբեր իր ամենամեծ գործովը, որ է կատաղութեան միջոցի գիւտը: Էքզիլ իր 16 Յուն. թիւին մէջ հետեւեալ կը գրէ.

« Փասթէօր չէր յաջողած գտնել կատաղութեան միջոցը և մահը ընդհատած էր իր յաւառ խուզարկութիւնները այս մասին:

« Ենթագիտունի աշակերտներուն համար նուիրական պարտականութիւն մը եղած էր Վարպետին ընդհատուած աշխատութեան շարունակութիւնը ի գլուխ հանուելը:

« Տօքթ. Իւուի բաժնին մէջն է որ Տօքթ. Մանուէլեան, շատ տարիներու համբերատար և գիտնական խուզարկութիւններէ վերջ յաջողած է գտնել կատաղութեան միջոցը, և այսպէսով օժտել փասթէօրեան հաստատութիւնը փառքի այս նոր տիտղոսով:

« Փասթէօր համոզուած էր որ կատաղութեան մակաբոյծին (parasite) գիւտը մեկնակէտը պիտի ըլլար շատ մը բարերար գիւտերու: Յունանք որ մօտիկ ապագան հաստատէ մեծանուն գիտունին նախատեսութիւնը»:

\* 1924 Յունուար 1էն սկսեալ չընթանակութեան հանուած են Հայաստանի մէջ համախորհրդային նամակագրութիւններ 1, 2, 3, 4, 5, 6, 10 և 20 կոպէկ գինով:



“ԲԱԶՄԱՎԷՊ”, 1918

ՀՐԱՏԱՐԱՆՈՒՄՍ ԵՄԻՆ 1923

Ի ՅԻՇԱՏԱԿ ԻՐ ՈՒԹՍՈՒՆԱՄԵԱԿԻՆ

1843-1923

Յր. գաղղ. 35. — Ամերիկայի համար՝ տղ. 7.

դիմել առ Rédaction de la Revue «PAZMAVEB»

S. Lazare

VENISE

(Italie)